<<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի պատվերով <<ԿոնստանտաԲիլդ>> ՍՊԸ կողմից մշակվող <<Արթիկ քաղաքի փակ քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում>> ծրագրի շրջանակներում Արթիկ քաղաքի փակված քարհանքի տարածքում անտառպուրակի և հանգստի գոտու հիմնման նածագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումների 4-րդ փուլի

Արձանագրություն թիվ 4

02.07.2020թ. ***ք. Արթիկ***

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2020 թվականի հուլիսի 2-ին ժամը 11:00-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի համայնքապետարանում տեղի ունեցավ <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի պատվերով <<Կոնստանտա Բիլդ>> ՍՊԸ կողմից մշակվող <<Արթիկ քաղաքի փակված քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում>> ծրագրի շրջանակներում իրականացվող Արթիկ քաղաքի փակված քարհանքների տարածքում անտառպուրակի և հանգստի գոտու հիմնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության վերաբերյալ հանրային քննարկումների 4-րդ փուլը:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Գրիգորյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Գ. Փթուկյանը, <<ԿՈՆՍՏԱՆՏԱ ԲԻԼԴ>> ՍՊԸ-ի տնօրեն, նախագծի գլխավոր ճարտարապետ Ա. Խաչատրյանը, ՀՀ ՇՄ նախարարության առաջատար մասնագետ Հ. Ալեքսանյանը, Արթիկի համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում էր Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Գրիգորյանը: Նա մասնակիցներին ներկայացրեց հանդիպման նպատակը, այն է՝ նախատեսվող գործունեության համար <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով հանրային քննարկումների անցկացում: Նա ներկայացրեց, որ համավարակի պայմաններում բնակչության կողմից առավել մասնակցություն ապահովելու նպատակով հանրային քննարկումն անցկացվում է առցանց տարբերակով Արթիկի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջով, և համայնքի բնակիչներն իրենց կարծիքները, հարցերը,

դիտողություններն ու առաջարկությունները կարող են թողնել մեկնաբանություններում, ապա դրանք կբարձրաձայնվեն հանրային քննարկման ընթացքում:

Ելույթ ունեցան՝

1. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Հ. Ալեքսանյանին, ով մասնակիցներին ներկայացրեց <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի նախնական գնահատման փորձաքննության առարկան և իրավական հիմքերը: Նա նշեց, որ այս ծրագրով նախատեսվող գործունեությունը Ա կարգի գործունեություն է, և օրենքով սահմանված կարգով այսօր կայանում է հանրային քննարկումներ վերջին՝ 4-րդ փուլը:
2. <<Կոստանտաբիլդ>> ՍՊԸ-ի տնօրեն Ա. Խաչատրյանն առավել մանրամասն ներկայացրեց աշխատանքային նախագիծը, նրանում ներառված բնապահպանական միջոցառումները:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

1.Գ. Փթուկյանը հարցրեց, արդյոք բավարար է այդ պլաստի վրա բնահողի 10 սմ հաստությունը:

Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ գազոնի համար 10 սմ հողածածկը քիչ չէ, իսկ ծառերի համար փորվում են բաժակներ համապատասխան խորությամբ. 0,5 խմ հող նախատեսվում յուրաքանչյուր ծառի բաժակի համար, և նախնական հաշվարկով 20 000 խմ սևահողը լրիվ բավարար է ծրագրի իրականացման համար: Նա հավելեց, որ ԲԾԻԳ-ի հետ նախնական քննարկման ժամանակ նախատեսվում էր 40 հա տարածքի վրա ստեղծել հողածածկ, սակայն հետագա քննարկումների արդյունքում նրանք եկան եզրակացության, որ հողածածկվելու է միայն հանգստյան գոտու տարածքը, ինչի համար նախատեսվում է 20 000 խմ բնահող: Ա. Գրիգորյանը նշեց, որ այդ քանակությամբ բնահողի պայմանավորվածություն համայնքապետարանն այս պահին ունի:

2. Գ Փթուկյանը հարցրեց, թե վերջնական մրցույթը շինարարի ընտրության համար երբ կհայտարարվի և նախահաշվով ինչքան ֆինանսական միջոցներ են նախատեսվում այս աշխատանքների իրականացման համար:

Ա. Խաչատրյանը մանրամասնեց, որ ընթացիկ տարում շինարարի ընտրության մրցույթը կկայանա և պարզ կդառնա ծրագրի շինարարը, ում մեկ տարին բավարար կլինի տարածքում հարթեցման, հողային աշխատանքների և ծառատունկի համար: Իսկ ֆինանսական միջոցների համար ԲԾԻԳ-ն է հաշվետվություն տալու՝ հիմնվելով նախագծային առաջադրանքի վրա: Այսինքն երկու տարի դեռևս անհրաժեշտ կլինի վերջնական ավարտի համար:

Ա. Խաչատրյանը նաև խոսեց բնահողերի տեղափոխման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մեղմելու համար համայնքի բանուկ հատվածներից շրջանցող ճանապարհների մասին: Այլընտրանքային ճանապարհների մասով առավել մանրամասն տեղեկություն տվեց Գ. Փթուկյանը:

3. Համայնքի բնակիչ Ա. Նահապետյանը հարց բարձրացրեց, արդյոք քաղաքացիների մոտ ավելի մեծ գիտակցություն ձևավորելու համար նպատակահարմար չէր ծառատունկը կազմակերպվեր և պատասխանատվությունը դրվեր բնակչության վրա:

Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ բնակչության վրա այս հարցում պատասխանատվություն դնել նպատակահարմար չէ: Արթիկի համայնքապետարանը հետագայում կարող է բարոյահոգեբանական կողմն ապահովելու համար կազմակերպել շաբաթօրյակներ, որում բնակիչներն իրենց մասնակցությունը կունենան ծառատնկման միջոցով, սակայն պատասխանատվությունը թողնել բնակիչների վրա՝ նպատակահարմար չէ: Հանգստյան գոտու ստեղծումից հետո ծառերի խնամքի ու պահպանման խնդիրը կդրվի համայնքի վրա, և այստեղ բնակիչները կունենան իրենց բաժին պատասխանատվությունը: Բացի այդ շինարարը պատասխանատվություն է կրելու նաև չաճած ծառերի համար՝ դրանց փոխարեն նոր տնկիներ տեղադրելով:

4. Համայնքի բնակիչ Ա. Նահապետյանը հարցրեց, արդյոք սահմանափակում կլինի հանգստյան գոտի մուտք գործող բնակիչների թվաքանակի մասով:

Գ. Փթուկյանը պատասխանեց, որ նախատեսվում է 30 հատ տաղավարներ պատրաստել՝ յուրաքանչյուր նախատեսված 10 հոգու համար: Դա ենթադրում է 300 հագու միաժամանակյա ներկայություն այգում:

5. Համայնքապետարանի աշխատակից Է. Չթեյանը հարցրեց, արդյոք ոռոգման ջրի հարցը լուծված է:

Գ. Փթուկյանը պատասխանեց, որ ծառերի և թփերի ոռոգման համար նախատեսվող ջուրը վերցվելու է խմոցների ջրից, որի թույլտվությունն արդեն իսկ կա:

Համայնքի բնակիչ Ա. Նահապետյանը հարցրեց, արդյոք շինարարն է տեղադրելու տաղավարները:

Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ տաղավարներ ծրագրով նախատեսված չեն:

Տ. Չարչյանը նշեց, որ առցանց հանրային քննարկման հեռարձակմանը հետևում են մոտ 360 օգտատեր, սակայն հարցադրումներ չեն հնչեցվել օնլայն հարթակից:

Ա. Գրիգորյանը, ամփոփելով հանրային քննարկումների արդյունքները, շնորհակալություն հայտնեց մասնակիցներին ներկա գտնվելու համար՝ ծրագրի նախագծող կազմակերպությանը մաղթելով հետագա հաջողություններ:

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ
հանրային քննարկման պատասխանատու
համայնքի ղեկավարի խորհրդան՝ _____ Գ. Փթուկյան

Ձեռնարկող՝ <<ԿՈՆՍՏԱՆՏԱ ԲԻԼԴ>> ՍՊԸ-ի տնօրեն
Նախագծի գլխավոր ճարտարապետ՝ _____ Ա. Խաչատրյան

ՀՀ շրջակա միջավայրի
նախարարության առաջատար մասնագետ՝ _____ Հ. Ալեքսանյան

Հանրային քննարկումների քարտուղար՝
Արթիկի համայնքապետարանի քարտուղարության
բաժնի գլխավոր մասնագետ, իրավաբան՝ _____ Տ. Աղաքարյան

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

<<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի կողմից իրականացվող <<ԿՈՍՏԱՆՏԱԲԻԼԴ>> ՍՊԸ-ի կողմից մշակված՝ <<Արթիկ քաղաքի փակ քարհանքի թափոնների և ջրհեղեղի կառավարում>> ծրագրի շրջանակներում նախատեսվող <<Արթիկ քաղաքի փակված քարհանքի տարածքում անտառապուրակի և հանգստյան գոտու հիմնման>> շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ 4-րդ հանրային քննարկման մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

02.07.2020 թ. ժամը 11:00-ին **Արթիկի համայնքապետարան**

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	[illegible]	+374-93-884625	[illegible]	[illegible]
2	[illegible]	077293377	[illegible]	[illegible]
3	[illegible]	077770775	[illegible]	[illegible]
4	[illegible]	098770244	[illegible]	[illegible]
5	[illegible]	055-74-58-41	[illegible]	[illegible]
6	[illegible]	093070748	[illegible]	[illegible]
7	[illegible]	094876700	[illegible]	[illegible]
8	[illegible]	093344420	[illegible]	[illegible]
9	[illegible]	093803228	[illegible]	[illegible]
10	[illegible]	094428842	[illegible]	[illegible]
11				
12				
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				